ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046 , tumanyan.lori@mta.gov.am

N 158
21 հոկտեմբեր 2015թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու թիվ 31 -34-Ա որոշումները:

Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 31

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2015թվականի հոկտեմբերի 15-ի նիստի օրակարգը.

1. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15 –Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՄԻՆ
2.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
3.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԸ
4.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 32-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով.

Ընդունել՝ի գիտություն Թումանյան համայնքի 2015թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝համամաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՈՍՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված

Թումանյան համայնքի ավագանու
2015թ.-ի հոկտեմբերի 15-ի թիվ 32-Ա
որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2015 թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեն կատարվել է եկամուտների գծով 100,3 %-ով, նախատեսված 30005,5 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 30104,5 հազ.դրամ: Սեփական եկամուտները `( Հարկային եկամուտներ և տուրքեր,այլ եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 6258,6 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 6357,6 հազ.դրամ, կատարման տոկոսը`101,6 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ) նախատեսված էր 23746,9 հազ. դրամ, տրվել է 23746,9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 22636,9 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%,իսկ այլ դոտացիաները նախատեսված էր 1110,0 հազ. դրամ,որը նույնպես տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%:

1. Վարչական մասի եկամուտները

2015թ-ի բյուջեն վարչական մասով երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 26505,5 հազ. դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 26604,5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,4 % : Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 2758,6 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 2857,6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 103,6 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 23746,9 հազ. դրամը տրվելէ ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 22636,9 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%,իսկ այլ դոտացիաները նախատեսված էր 1110,0հազ. դրամ,որը նույնպես տրամադրվել է ամբողջությամբ:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2015 թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 701,8 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 703,1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,2 %: Նախորդ տարվա համեմատ հողի հարկի կատարման տոկոսը նվազել է:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 231,5 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 299,4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 129,3 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 1300,3 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 1415,7 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝ 108,9 %, որը նախորդ տարվա համեմատ աճել է:

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 400,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 340,3 հազ.դրամ կամ կատարման տոկոսը՝ 85,1 %, որը նախորդ տարվա համեմատ նվազել է :

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2015թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 125,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 99,1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 79,3 % :

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 23746,9 հազ. դրամի փոխարեն տրվել է 23746,9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝100,0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝22636,9 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%,իսկ այլ դոտացիաները նախատեսված էր 1110,0 հազ. դրամ,որը նույնպես տրամադրվել է ամբողջությամբ:

2. Բյուջեի վարչական մասի ծախսերի կատարողականը

Բյուջեի վարչական մասի 2015թ-ի բյուջեի ծախսերը երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 26505,5 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 24923,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 94,03%:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են

ա) Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 2015 թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված 14109,4 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 13253,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 93,9 %:

բ) Տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը նախատեսված է 170,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 170,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100.0 % :

գ) Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 2500,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 2500,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100,0 % :

դ) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության՝ այդ թվում փողոցների լուսավորության համար ծախսերը նախատեսված 900,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 715.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 79,4%:

ե) Այլ մշակութային կազմակերպությունների համար նախատեսված էր 45,0 հազ. դրամ ծախս փաստացի ծախսվել է 20,0 հազ.դրամ կամ կատարման տոկոսը՝ 50,0 %:

զ)Կրթության համար նախատեսված ծախսերը 8230,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 7715,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 93,7 %,այդ թվում նախադպրոցական կրթության համար նախատեսված 4400,0 հազ.դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 4360,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 99.1 %, արտադպրոցական դաստիարակության համար նախատեսված 3500,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կատարվել է 3080,0 հազ.դրամ, կատարման տոկոսը՝88,0 %, կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների համար նախատեսված 275,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 275,0 հազ.դրամ կատարման տոկոսը՝ 100,0 %,

է) Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը՝ երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված 550,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է550,0 հազ.կատարման տոկոսը՝100,0%:

2)Ըստ տնտեսագիտական դասակարգման 2015 թ.-ի երրորդ եռամսյակի

ընթացքում նախատեսված ծախսերը կատարվել են

ա) Աշխատանքի վարձատրության համար նախատեսված 11350,3 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կատարվել է 11047,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 97,3 %,

բ) Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերը նախատեսված 3889.1 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կատարվել է 3175.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 81.6 %:

գ) Ընթացիկ դրամաշնորհները համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված էր 10400,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 9940,0 հազ.դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 95,6 %,այլ ընթացիկ դրամաշնորհները նախատեսված էր 170,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 170,0 հազ.դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 100.0 %

դ) Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված 550.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է 550.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,0 %:

ե) Այլ ծախսերը նախատեսված էր 96.1 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է 41.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝42.7 %:

3. Բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

Թումանյան համայնքի 2015 թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի ֆոնդային մասի ծախսերը նախատեսված էր 6045.7 հազ. դրամ,սակայն փաստացի ծախս կատարվել է 1500.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 24.8 %:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որից ճանապարհային տրանսպորտի համար նախատեսված էր 1045.6 հազ. դրամ փաստացի ծախս չի կատարվել:

Թումանյան համայնքի 2015 թ.-ի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման ցուցանիշները այնքան էլ գոհացուցիչ չէ, քանի որ արտագաղթած բնակիչների կողմից հարկային պարտավորությունները չկատարելու պատճառով առաջացել է ապառքներ: Չնայած դրան, համայնքի ղեկավարի և քաղաքապետարանի աշխատակազմի բարեխիղճ և հետևողական աշխատանքի շնորհիվ երրորդ եռամսյակի պլանը նույնպես գերակատարվել է :

Թումանյան համայնքի ղեկավար՝ /Լ. Զավարյան/

Կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ /Ա.Ամիրջանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 33

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԸ

Հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2013թվականի մարտի 13-ի՝<<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի 2-րդ և 3-րդ թաղամասերի խմելու ջրի,ջրամբարների և կոյուղու համակարգերը Հայջրմուղկոյուղի ՓԲԸ -ը անհատույց հանձնելու մասին>>N 9 որոշումը ,հաշվի առնելով,որ Թումանյան քաղաքի 2-րդ թաղամասը սնուցող ջրագիծը հաճախակի վթարի է ենթարկվում ,որի պատճառով խախտվում է ջրամատակարարման գրաֆիկը և ազգաբնակչությունը օրերով զրկվում է ջրամատակարարումից , 2-րդ թաղամասը սնուցող ջրագիծը անցնում է քաղաքի գերեզմանի և աղբավայրի տարածքով,այն գտնվում է խիստ քայքայված վիճակում ,և չնայած այն բանին,որ այդ ջրագիծը մի քանի անգամ վերանորոգվել է ,ներկայումս էլ շարունակում է վթարներ տեղի ունենալ ,որը տեղիք է տալիս ազգաբնակչության լուրջ դժգոհությանը՝համայնքի ավագանին որոշում է.

Դիմել <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ն գլխավոր տնօրեն պարոն Պատրիկ Լորենին՝

Թումանյան քաղաքի 2-րդ թաղամասի ազգաբնակրության ջրամատակարարման որակը բարելավելու և ջրի հոսակորուստները նվազացնելու համար խնդրում ենք հնարավորինս կարճ ժամկետում իրականացնել քաղաքի 2-րդ թաղամասը սնուցող ջրագծի վթարի վերացման աշխատանքներ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՈԱՄԱՔՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 34-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 11-ի <<Թումանյան համայնքի 2015թ. բյուջեն հաստատելու մասին >> թիվ 57-Ն որոշումը,Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Թումանյան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը և Թումանյան քաղաքի բնակիչներ՝Գուրգեն Մեյրանի Մարուքյանի , Էդիկ Գերմանի Ռասոյանի, Անդրանիկ Բորիկի Ռասոյանի,Կոլյա Աննուբաղի Պեպանյան և Անահիտ Աշոտի Պետրոսյանի դիմումները՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան քաղաքի սոցիալապես անապահով հիշյալ քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն .

1)Գուրգեն Մեյրանի Մարուքյան - 30000 դրամ
2) Էդիկ Գերմանի Ռասոյան -30000 դրամ
3) Անդրանիկ Բորիկի Ռասոյան - 30000 դրամ
4) Կոլյա Աննուբաղի Պեպանյան - 30000 դրամ
5) Անահիտ Աշոտի Պետրոսյան - 20000 դրամ
6) Ռոզիկ Վլադիմիրի Ղազարյան - 30000 դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Հերմինե Հովսեփյանին լիազորել՝Ալավերդու բանկից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ -4 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՈԱՄԱՔՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՁԱՎԱՐՅԱՆ